ՏԵՂԵԿԱՆՔ

Մոնղոլիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

«Մոնղոլիայի և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագրի կնքումը բխում է ՀՀ և Մոնղոլիայի միջև երկկողմ հարաբերությունները խթանելու անհրաժեշտությունից:

Երկկողմ ավելի քան քսանամյա հարաբերությունների ընթացքում բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել՝ մեր երկրների միջև համագործակցությունը ընդլայնելու նպատակով: Վերջին կարևոր զարգացումն է 2013թ. դեկտեմբերին Մոնղոլիայում ՀՀ դեսպանի նշանակումը (նստավայրը՝ ք. Պեկին): Բանակցություններ են վարվում Մոնղոլիայի արտաքին գործերի նախարարի ՀՀ այց կազմակերպելու և ՀՀ-ում Մոնղոլիայի դեսպանի նշանակման (նստավայրը՝ ք. Մոսկվա) վերաբերյալ:

Համաձայնագրի կնքումն ուղղված է ՀՀ և Մոնղոլիայի դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացմանը և, հետևաբար, կնպաստի ՀՀ և Մոնղոլիայի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և ամրապնդմանը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի կնքումը: